ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2019ԹԹ. ՍՈՑԻԱԼ – ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԶԱՐԳԱՑՄԱՆ

# Ծ Ր Ա Գ Ի Ր

2017-2019ԹԹ.

Կազմեց համայնքի ղեկավար՝ Ռուբեն Խլղաթյանը

Քննարկվել և հաստատվել է **քաղաք Արմավիր համայնքի**

Ավագանու 2016 թվականի դեկտեմբերի **8 թիվ** 12 նիստի **թիվ** 134-Ն որոշմամբ

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի 2017-2019թթ. զարգացման ծրագիրը (ՀԶԾ) մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ-երի) իրավասություններն ու փաստաթղթերը նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶԾ-ի մշակման մեթոդաբանական առանձնահատկությունները և ծրագրային հիմքերը :

ՀԶԾ-ն մշակելիս առանձնացվել և հաշվի են առնվել մեթոդաբանական հետևյալ չափանիշները՝

- համայնքի ֆինանսական կարողությունը.
- համայնքի բնակչության թվաքանակը.
- համայնքում առկա ենթակառուցները և մատուցվող ծառայությունները.
- համայնքում առկա վտանգները (ռիսկերը):

ՀԶԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀԶԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել նաև համայնքում աղետի բազմաբնույթ վտանգները (ռիսկերը), որոնց կառավարման համար նախատեսվել են որոշ գործողություններում միջոցառումներ:

Համայնքի 2017-2019թթ. ՀԶԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները և նպատակ ունենալով հետևողականորեն բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով աստիճանաբար բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

ՀԶԾ-ն դիտարկելով որպես համայնքի ռազմավարական պլանավորման և մասնակցային կառավարման կարևորագույն միջոց, համայնքի ղեկավարը և ավագանու անդամները ՀԶԾ-ի փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ փակատար փոխըմբռնում ՀԶԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

ՀԶԾ-ի 1-ին բաժնում ներկայացվում է համայնքի սոցիալ-տնտեսական ընդհանուր և ոլորտային փաստացի իրավիճակի և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների բնութագրումը և վերլուծությունը՝ հաշվի առնելով ՀԶԾ-ի մշակման չափանիշների ազդեցությունը համայնքի ՏԻՄ-երի գործունեության ոլորտների կազմի վրա, համայնքում առկա սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների ֆիզիկական վիճակի գնահատումը, դրանց շահագործման պահպանման և նորոգման հետ կապված խնդիրները, ինչպես նաև դրանց զարգացման հնարավորությունների, կարողությունների ու ռեսուրսների վերլուծումը և

գնահատումը: Համայնքի ընդհանուր և ոլորտային կարիքների գնահատման հիման վրա կազմվել է համայնքում առկա հիմնախնդիրների ցանկը՝ առանձնացնելով նրանք, որոնց լուծումը նպատակահարմար է ներառել սույն ՀԶԾ-ում՝ ելնելով համայնքի ռեսուրսային հնարավորություններից : Բաժնում ներառվել է նաև համայնքի ՈՒԹՀԿ-վերլուծությունը՝ հիմնվելով համայնքի իրավիճակի վերլուծության ու գնահատման արդյունքների վրա և ճանաչելով համայնքի ուժեղ և թույլ կողմերը, զարգացման ներքին ու արտաքին հիմնական հնարավորությունները, համայնքին սպառնացող հիմնական վտանգները:

ՀԶԾ-ի 2-րդ բաժնում սահմանվում են համայնքի երկարաժամկետ տեսլականը, զարգացման ռազմավարությունը և սույն ՀԶԾ - ի հիմնական նպատակները:

ՀԶԾ-ի 3-րդ բաժնում ներկայացվում են պետության, միջազգային և տեղական դոնոր, քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի և այլ կազմակերպությունների կողմից համայնքում գալիք չորս տարիների համար նախատեսվող (շարունակվող) հանրապետական, մարզային, տարածաշրջանային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերը, գործողությունները և միջոցառումները:

ՀԶԾ-ի 4-րդ բաժնում ներկայացվում է համայնքի ֆինանսական վիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը՝ ըստ համայնքի բյուջեի եկամտային ուղղությունների (սեփական եկամուտներ, պաշտոնական տրանսֆերտներ, փոխառու միջոցներ)՝ դիտարկելով նախորդ երկու և գալիք չորս տարիների եկամտային ցուցանիշները:

ՀԶԾ-ի 5-րդ բաժնում ներկայացվում է համայնքի զարգացման ոլորտային ծրագրերի ընտրությունը, դրանց առաջնահերթությունների սահմանումը՝ ելնելով համայնքի իրավիճակի գնահատման արդյունքներից, բացահայտված կարիքներից ու հիմնախնդիրներից, ենթակառուցվածքների վիճակից և ՀԶԾ-ի հիմնական նպատակներից: Բաժնում ձևակերպվել և ամփոփվել են ՀԶԾ-ում ներառվող ոլորտային ծրագրեր՝ օգտագործելով ծրագրերի կազմման օրինակելի ձևը, ինչպես նաև ներկայացնելով ծրագրերի ֆինանսավորման աղբյուրները (համայնքի բյուջե, ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ, այլ) և դրանց մոտավոր արժեքները՝ ըստ գալիք չորս տարիների:

ՀԶԾ-ի 6-րդ բաժնում ներկայացվում է համայնքի սեփականություն համարվող շենքերի ու շինությունների, հողամասերի օտարման քառամյա ծրագիրն՝ ըստ տարիների:

ՀԶԾ-ի եզրափակումում ներկայացվում են համառոտ մոտեցումներ՝ ՀԶԾ-ի իրականացման, մշտադիտարկման (մոնիթորինգի), վերահսկման և գնահատման, տարեկան հաշվետվությունների կազմման և քննարկման, ՀԶԾ-ում փոփոխությունների և (կամ) լրացումների կատարման, քննարկման և հաստատման գործընթացների վերաբերյալ:

## 1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

### 1.1 ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Արմավիր (նախկին Հոկտեմբերյան) քաղաքը հիմնադրվել է 1931 թ. հունիսի 26-ին: Քաղաքաշինական, տնտեսական, սոցիալական, մշակութային քաղաքականության, կառավարման ժամանակակից և այլընտրանքային մեթոդների ու ձևերի կիրառման, ծրագրավորված, նպատակային և ամենօրյա աշխատանքով՝ աստիճանաբար լուծվում են

**տնտեսական ,սոցիալական մշակութային առանձին խնդիրներ, քաղաքը որոշակիորեն ստանում է քաղաքաշինության արդի պահանջներին համապատասխան տեսք:**

**Արմավիր մարզի կենտրոնը Արմավիր քաղաքն է, որտեղ գործում են նաև հանրապետական ենթակայության մարզային կառույցները, որոնք զբաղվում են Լներգամատակարարման, գազամատակարարման անվտանգության և օրինականության պահպանման, հարկային քաղաքականության, փոստային և հեռախոսային կապի, բուժսպասարկման, սանիտարական հսկողության, ջրամատակարարման և այլ հարցերով: Արմավիր քաղաքի հետագա զարգացմանը կարող են նպաստել արդյունաբերական և վերամշակող ձեռնարկությունների վերագործարկումը, մշակութային, կրթական և մարզական հիմնարկների գործունեության ընդլայնումն ու ակտիվացումը:**

**Քաղաքի զարգացմանը նպաստող կարևոր գործոն կարող է դառնալ տնտեսաաշխարհագրական հարմար դիրքը: Արմավիրը գտնվում է Արարատյան դաշտի հյուսիս-արևմտյան հատվածում, մայրաքաղաքից 48 կմ հեռավորության վրա: Արմավիրով են անցնում Երևան-Հյուսիսային Կովկաս երկաթուղին և Երևան –Գյումրի հանրապետական նշանակության ավտոճանապարհը: Արմավիր քաղաքի գլխավոր հատակագիծը կազմվել է Ալ. Թամանյանի ղեկավարությամբ: Հետագայում գլխավոր հատակագծեր են կազմվել 1940,1955,1976 և 2010 թվականներին: Արմավիրը զբաղեցնում է 2188 հա տարածություն, ծովի մակերևույթից բարձր է 840-860 մետր:**

**Արմավիր քաղաքում բնակվում է շուրջ 40000 մարդ:**

## 1.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքի բնակչության թիվը կազմում է 37216 մարդ՝ բնակչության տարիքային հետևյալ կազմով.

- 0 - 6 տարեկան - 3495 մարդ
- 7 - 17 տարեկան - 5095 մարդ
- 18 - 62 տարեկան - 23188 մարդ
- 63 և ավելի տարեկան 5438 մարդ
- կենսաթոշակառուների թիվը - 5447 մարդ
- տարեց կենսաթոշակառուների թիվը (75 տարեկան և բարձր ) – 1627 մարդ
- հաշմանդամների թիվը – 1716 մարդ
- հաշմանդամ երեխաների թիվը - 77 մարդ
- միակողմանի ծնողազուրկ երեխաների թիվը -132 մարդ
- առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թիվը - 6 մարդ
- գործազուրկների թիվը – 815 մարդ
- տնային տնտեսությունների թիվը – 10046
- ընտանեկան նպաստի պետական համակարգում փաստագրված տնային տնտեսությունների թիվը – 901
- **նպաստառու ընտանիքների թիվը – 760**

## 1.3 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

**2015թ. Մարտի 25-ին չորրորդ անգամ Համայնքի ղեկավար է ընտրվել Ռուբեն Խաչիկի Խլղաթյանը: Բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման, համայնքի հիմնախնդիրների լուծման համար Արմավիր համայնքի ղեկավարը, համայնքի ավագանին իր 15 անդամներով նպատակասլաց պետք է ծախսեն համայնքի բյուջեի ֆինանսական միջոցները: Անհրաժեշտության և հնարավորության դեպքում միջոցներ հայթայթելու պետությունից, միջազգային և տեղական դոնոր կազմակերպություններից:**

**Համայնքապետարանի աշխատակազմն ունի հետևյալ կառուցվածքը .**

1. Աշխատակիցների քանակը- 63 մարդ
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| համայնքի ղեկավար | 1 | 275 000 |
| *ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ* | | |
| համայնքի ղեկավարի տեղակալ | 2 | 220 000 |
| համայնքի ղեկավարի օգնական | 1 | 135 000 |
| *ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐ* | | |
| աշխատակազմի քարտուղար | 1 | 160 000 |
| *ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ* | | |
| բաժնի պետ | 1 | 125 000 |
| բաժնի պետի տեղակալ | 1 | 115 000 |
| գլխավոր մասնագետ | 2 | 110 000 |
| I կարգի մասնագետ | 4 | 85 000 |
| II կարգի մասնագետ | 2 | 80 000 |
| *ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ* | | |
| բաժնի պետ | 1 | 125 000 |
| գլխավոր մասնագետ | 2 | 110 000 |
| I կարգի մասնագետ | 2 | 85 000 |
| II կարգի մասնագետ | 1 | 80 000 |
| *ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ* | | |
| բաժնի պետ | 1 | 125 000 |
| առաջատար մասնագետ | 1 | 90 000 |
| I կարգի մասնագետ | 5 | 85 000 |

| | | |
|---|---|---|
| **ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՀԱՐՑԵՐ ԲԱԺԻՆ** | | |
| բաժնի պետ | 1 | 125 000 |
| գլխավոր մասնագետ | 1 | 110 000 |
| առաջատար մասնագետ | 2 | 90 000 |
| I կարգի մասնագետ | 1 | 85 000 |
| II կարգի մասնագետ | 1 | 80 000 |
| **ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ** | | |
| բաժնի պետ | 1 | 125 000 |
| գլխավոր մասնագետ | 1 | 110 000 |
| առաջատար մասնագետ | 1 | 90 000 |
| I կարգի մասնագետ | 1 | 85 000 |
| II կարգի մասնագետ | 1 | 80 000 |
| **ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ, ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԲԱԺԻՆ** | | |
| բաժնի պետ | 1 | 125 000 |
| գլխավոր մասնագետ | 1 | 110 000 |
| առաջատար մասնագետ | 1 | 90 000 |
| I կարգի մասնագետ | 2 | 85 000 |
| II կարգի մասնագետ | 1 | 80 000 |
| **ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՄՇԱՄԱՐՄԱՆ ԵՎ ԳԱՆՁՄԱՆ ԲԱԺԻՆ** | | |
| բաժնի պետ | 1 | 125 000 |
| գլխավոր մասնագետ | 1 | 110 000 |
| առաջատար մասնագետ | 1 | 90 000 |
| I կարգի մասնագետ | 1 | 85 000 |
| II կարգի մասնագետ | 1 | 80 000 |
| **ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆ** | | |
| բաժնի պետ | 1 | 240 750 |
| I կարգի մասնագետ | 2 | 107 800 |
| **ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺԻՆ** | | |
| բաժնի պետ | 1 | 125 000 |
| առաջատար մասնագետ | 1 | 90 000 |
| **ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ** | | |
| տնտեսվար | 1 | 90 000 |
| քարտուղարուհի | 2 | 90 000 |
| վարորդ | 1 | 110 000 |
| պահակ | 1 | 75 000 |
| հավաքարար | 3 | 75 000 |

. 1974թ. հունվարի 1-ին և դրանից հետո ծնված աշխատողների պաշտոնային դրույքաչափերը 1 հաստիքային միավորի համար սահմանել ոչ պակաս 77904 դրամ

## 1.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկը սահմանվել է 22 կառավարության 14.03.1997 թ. թիվ 51 որոշմամբ: Ներկայումս համայնքի սեփականություն համարվող գույքն ունի հետևյալ ցանկն ու վիճակը:

**Աղյուսակ 1. Համայնքի սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների վիճակի գնահատում**

| հ | Կառույց | Հասցե | Կառուցման տարեթիվ | Մակերես (քառ.մ.) | Ընդհանուր վիճակի գնահատական | Նորոգման/ վերականգնման /փոխարինման կարիք | Այլ նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Քաղաքապետարան | Հանրապետության 32 | | 1456.8 | լավ | —— | |
| | Թիվ 1 մանկապարտեզի շենք | Հ. Ավետիսյան | 1970թ. | 2000.0 | բավարար | Նորոգում | |
| | Թիվ 2 մանկապարտեզի շենք | Ջիվանու 40 | 1983թ. | 1248.3 | բավարար | Նորոգում | |
| | Թիվ 3 մանկապարտեզի շենք | Դարմոյան փ. թիվ 8 | 1958թ. | 720.4 | բավարար | Նորոգում | |
| | Թիվ 4 մանկապարտեզի շենք | Մաշտոցի 59 | 1971թ. | 1677 | Լավ | —— | |
| | Թիվ 5 մանկապարտեզի շենք | Արարատյան 5/7 | 1971թ. | 1727.4 | բավարար | Նորոգում վերականգնում | |
| | Թիվ 6 մանկապարտեզի շենք | Սայաթ-Նովա փ. թիվ 10ա | 1980թ. | 2423.6 | բավարար | Նորոգում | |
| | Թիվ 7 մանկապարտեզի շենք | Հանրապետության 1 նրբ. 9/1 | 1975թ. | 660.4 | բավարար | Նորոգում | |
| | Թիվ 8 մանկապարտեզի շենք | Չարենցի 26 | 1964թ. | 1251.3 | բավարար | Նորոգում | |
| 9. | Թիվ 9 մանկապարտեզի շենք | Արարատյան 1 | 1983թ. | 1609.4 | բավարար | Նորոգում | |
| 1. | Թիվ 10 մանկապարտեզի շենք | Շահումյան 29 | 1964թ. | 609.3 | լավ | —— | |
| 2. | Թիվ 11 մանկապարտեզի շենք | Կոմիտասի 31 | 1978թ. | 1722.6 | բավարար | Նորոգում | |
| 3. | Թիվ 12 մանկապարտեզի շենք | Բաղրամյան 9 | 1980թ. | 1832.1 | բավարար | Նորոգում վերականգնում | |
| | Գեղարվեստի դպրոցի շենք | Գորկու 5 նրբ. թիվ 14 | | 1788.4 | Լավ | —— | |
| 5. | Նկուղ | Բաղրամյան 5 շենք | | 74.8 | լավ | —— | |
| 8. | Բաղրամյան-Շահումյան կից տարածքի կաթսայատուն | | 1990թ. | 2211,5 | վատ | —— | |
| 9. | Առևտր. շենք շինություն | Շահումյան 3ա/1 | | - | բավարար | —— | |
| 0. | Առևտր. շենք շինություն | Շահումյան 3ա | | 154.3 | բավարար | —— | |
| 1. | Շինություն | Չարենցի 32/3 | | 59.5 | լավ | —— | |
| 2. | Շինություն | Սայաթ-Նովա 1ա/1 | | 33.9 | Լավ | —— | |
| 3. | Շինություն | Երևանյան փ. 42/1 | | 72.7 | Լավ | —— | |
| 4. | Արվեստի դպրոց | Արարատյան 3 | 1979թ. | 1557.9 | լավ | —— | |
| 5. | Օժանդակ շինություն | Սայաթ-Նովա 8ա/1 | | - | բավարար | —— | |
| 6. | Թիվ 1 մարզադպրոց | Չարենցի 8 | 1969թ. | | լավ | —— | |
| 27. | Թիվ 3 մշ. տուն | Կոմիտասի 29 | | 1789.1 | վատ | —— | |
| 28. | Երաժշտական դպրոց | Հանրապետության 18 | 1967թ. | 567.1 | լավ | —— | |
| 29 | Թիվ 1 մշ. տուն | Ջիվանու 23 | 1950թ. | 1087.2 | Լավ | —— | |
| 30 | Ջրավազան | Երևանյան փ. | | 3.66 | Լավ | —— | |
| 31 | Բարեկարգում տն. վարչ. շենք | Սայաթ-Նովա 109ա | | 315.5 | բավարար | Նորոգում | |
| 32 | Օրդյան 137 (տնտեսակ) | Աբովյան 137 | | 1651.2 | Լավ | —— | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | [illegible] | Աբովյան 132 | 1969թ | 453.9 | լավ | | |
| 5 | [illegible] | | | 43.3 | | | |
| 6 | [illegible] | Ք. Արմավիր | | 547010քմ | Բավարար | նորոգում | |
| 8 | [illegible] | | | | վատ | վերակառուցում | |
| 7 | [illegible] | | | 17360քմ | լավ | | |

## 1.5 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՉ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքում կա արտադրական 4 միավոր՝

- <<Արմավիրի հաստոցաշինական գործարան >> ԲԲԸ
- <<Արմավիրի գազմաշ>> ՍՊԸ
- <<Լայթս Մեթալս ինդուստրիա>> ՍՊԸ
- <<Արմավիրի երկաթբետոնյա կոնստրուկցիաների գործարան>> ՍՊԸ
- Երևանի կոնյակի գործարանի մասնաճյուղ

Համայնքում գործում են ոչ կառավարական կազմակերպություններ / ՀԿ-ներ/

- <<Կարմիր Խաչ >> ՀԿ
- <<Արմավիրի զարգացման կենտրոն>> ՀԿ
- <<Նաիրի հաշմանդամ երեխաների մայրերի կազմակերպություն >> ՀԿ
- <<Մայրության օրրան>> ՀԿ
- <<Վետերանների խորհուրդ>> ՀԿ
- <<Աղվանական պատերազմի մասնակիցների խորհուրդ>> ՀԿ

Համայնքում գործում են քաղաքական հետևյալ կուսակցությունների մասնաճյուղերը՝

- Հայաստանի Հանրապետության Կուսակցություն (ՀՀԿ)
- Բարգավաճ Հայաստան (ԲՀԿ)
- Հայ Յեղափոխական Դաշնակցություն (ՀՅԴ)
- Օրինաց Երկիր Կուսակցություն (ՕԵԿ)
- Հայկական Վերածնունդ Կուսակցություն (ՀՎԿ)

## 1.6 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքը ունի գլխավոր հատակագիծ և քաղաքաշինական ծրագրային այլ փաստաթղթեր (գոտիավորման նախագիծ, ընթացիկ քաղաքաշինական քարտեզ, քաղաքաշինական կադաստր, քաղաքաշինական կանոնադրություն և այլն):

Համայնքը ապահովված է շուրջօրյա խմելու ջրով: Խմելու ջրով ապահովված են նաև համայնքի մանկապարտեզները և ենթակառուցվածքները:

Համայնքի մեծ մասը ապահովված է ոռոգման ջրով, սակայն որոշակի թաղամասեր անհրաժեշտություն ունեն ներքին ցանցի կառուցման:

Համայնքի 90% -ը գազաֆիկացված է:

Համայնքում աղբահանությունն իրականացվում է շաբաթը 6 անգամ, համայնքի բարեկարգում տնօրինության միջոցներով:

Համայնքում կա 1 գերեզմանատուն, որը ցանկապատված է մասամբ, ինչի պատճառով կենդանիները անարգելք մուտք են գործում այդ գերեզմանատան տարածքը՝ առաջացնելով բնակչության արդարացի դժգոհությունը:

## 1.7 ԲՆԱԿԵԼԻ և ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Համայնքում բազմաբնակարան բնակելի շենքեր՝ թվով 137, իսկ բնակելի առանձնատների քանակը 47720 է, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 1274,734 քմ: Առանձնատների մեծ մասը վերանորոգման կարիք ունի, իսկ նորաբաժան ընտանիքների համար անհրաժեշտ են նոր առանձնատներ: Սակայն, բնակչության սոցիալական վատ պայմանների պատճառով առանձնատների վերանորոգման աշխատանքներ կատարվում են միայն խիստ անհրաժեշտության դեպքերում, իսկ նոր առանձնատներ համարյա չեն կառուցվում:

## 1.8 ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի վարչական տարածքը կազմում է 2181.99 հա, այդ թվում՝

Գյուղատնտեսական- 848.02 հա

Բնակավայրերի-851.55 հա

Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադ. նշանակության օբյեկտներ-146.42 հա

Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակ. օբ.-53.55 հա

Հատուկ պահպանվող տարածքներ-110.26 հա

Հատուկ նշանակության-132.81 հա

Անտառային-

Ջրային-19.38 հա

Պահուստային

## 1.9 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում առկա է 848.02 հա գյուղատնտեսական նշանակության հողեր, որից 506.5 հա գյուղ նշանակության հողերը մշակվում են, իսկ 341.52 հա արոտ տեսակի հողեր են, որոնք չեն մշակվում ոռոգման համակարգի բացակայության պատճառով:

## 1.10 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ներքաղաքային ճանապարհային ցանցի երկարությունը կազմում է 89.6 կմ: Ասֆալտապատ ներքաղաքային ճանապարհային ցանցի երկարությունը կազմում է 48.8 կմ: Ներհամայնքային ճանապարհների ցանցի վիճակը գտնվում է միջին մակարդակի : Ներհամայնքային բազմաթիվ փողոցներ, ունեն գիշերային լուսավորություն:

Համայնքի տարածքում մասամբ տեղակայված են ճանապարհային երթևեկության նշաններ:

Համայնքի տարածքում գործում է 5 ներքաղաքային կանոնավոր երթուղիներ, որոնք լիարժեք բավարարում են քաղաքի ազգաբնակչությանը երթևեկելու համար :

Համայնքից մինչև մայրաքաղաք Երևան 45 կմ. է :

Համայնքի վարչական տարածքով է անցնում Երևան-Գյումրի հանրապետական նշանակության ճանապարհը:

Համայնքի տարածքում կատարվում է երթևեկության կանոններին համապատասխան գծանշման աշխատանքներ:

Համայնքում շահագործվում է մոտ 91 միկրոավտոբուս , 5473 թեթև մարդատար և բեռնատար ավտոմեքենաներ , 67 ավտոբուս :

Ներհամայնքային փողոցները հիմնականում չունեն անձրևատար կոյուղի :

## 1.11 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի տարածքում գործում է 320 օբյեկտներ , որից խանութներ 200 հատ , կրպակներ 9 հատ , վառելիքի մանրածախ առևտրի օբյեկտներ 16 հատ, , առևտրի կենտրոններ 2 հատ, սպառողական ապրանքների շուկաներ 3 հատ, գյուղատնտեսական արտադրանքի շուկա 2 հատ:

Վերը նշված օբյեկտները հաշվառված են պետական հարկային մարմնում, ինչպես նաև տարեկան կամ եռամսյակային կտրվածքներով վճարում են համապատասխան տեղական տուրք համայնքի բյուջեին, գործունեության թույլտվության համար:

Համայնքում գործում է 35 կենցաղսպասարկման ծառայություններ:

Համաձայն <<Առևտրի և ծառայությունների մասին օրենքի>> կիսամյակային կտրվածքով օբյեկտներում կատարվում է հսկողություն:

Համայնքում գործում է 21 հանրային սննդի օբյեկտներ, 8 հանդիսությունների սրահ:

## 1.12 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի կրթական համակարգը ներառում է 12 ՆՈՒՀ - եր, 1 արվեստի դպրոց, 1 երաժշտական դպրոց, 3 մարզադպրոցներ և գրադարանային համակարգ:

1. 1-12 մանկապարտեզներում հաճախող երեխաների թիվը կազմում է 1130, իսկ աշխատակիցներինը՝ 229: Համայնքի ավագանու որոշմամբ, մանկապարտեզ հաճախող երեխաների ծնողական ամսական վճարը կազմում է 7000 դրամ: Մանկապարտեզի պահպանման մնացած ծախսերը սուբսիդավորվում է համայնքի բյուջեից:

   Մանկապարտեզներում աշխատում են համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող և վերապատրաստում անցած մանկավարժներ:

3. 12 Ն ՄՒ Հ-երից 2-ը կապիտալ վերանորոգված են, մյուսները՝ մասնակի:

4. Կրթական ծառայությունների որակի բարձրացման և երեխաների համակողմանի զարգացման համար անհրաժեշտ է բարելավել մանկապարտեզների շենքային պայմանները, բարձրացնել մուլտիմեդիական բազան, բակերում տեղադրել մանկական խաղահրապարակներ և ստվերածածկ շինություններ, ձեռք բերել համապատասխան խաղային սարքավորումներ:

## 1.13 ՄՇԱԿՈՒՅԹ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1. Համայնքում գործում են արվեստի և երաժշտական դպրոցներ:

Արվեստի դպրոցը լրիվ վերանորոգված է, համալրված է համապատասխան սարքավորումներով և երաժշտական գործիքներով: Դպրոցն ունի գեղարվեստի, պարի և երաժշտական բաժիններ: Սաների ընդհանուր թիվը 388 է, գեղարվեստինը՝ 88, պարայինը՝ 135, երաժշտականինը՝ 165: Դպրոցի մանկավարժների թիվը 33 է, իսկ սպասարկող անձնակազմինը՝ 14:

Համայնքի երաժշտական դպրոցը գտնվում է թիվ 1 մանկապարտեզի շենքում: Այն ունի կապիտալ հիմնանորոգման կարիք: Դպրոցի սաների թիվը 134 է, մանկավարժներինը՝ 20, սպասարկող անձնակազմինը՝ 3:

Համայնքն ունի մշակույթի տուն, որը կապիտալ վերանորոգված է և համալրված է ժամանակակից սարքավորումներով:

Մշակույթի տունն ունի 20 աշխատող:

Համայնքն ունի կինոթատրոն, որը չի գործում և ունի կապիտալ հիմնանորոգման կարիք:

2. Մշակույթի ոլորտի զարգացման հիմնական գերակայություններն են՝

- Մշակութային համագործակցության խթանումը այլ համայնքների և քույր–քաղաքների հետ:
- Մշակութային կառույցների և հաստատությունների կառավարման կատարելագործումը:
- Տարբեր ժանրի մշակութային միջոցառումների նախաձեռնումն ու իրականացումը:
- Ազգային արժեքների, ժողովրդական ստեղծագործությունների և գեղարվեստական ինքնագործունեության զարգացումը:

3. Երիտասարդության ոլորտում համայնքապետարանը քայլեր կձեռնարկի՝ ստեղծելու սոցիալ-տնտեսական և հոգևոր մշակութային պայմաններ երիտասարդների կայացման համար:

Ոլորտի հիմնական նպատակներն են՝

- Ունենալ հոգեպես և ֆիզիկապես առողջ երիտասարդություն:
- Նպաստել երիտասարդների մասնակցության աստիճանի բարձրացմանը համայնքի հասարակական և քաղաքական զարգացումներին:
- Խրախուսել քաղաքի շնորհալի և տաղանդավոր երիտասարդներին, նպաստել նրանց կարողությունների զարգացմանն ու դրսևորմանը:

4. Համայնքի գրադարանային համակարգը ներառում է 4 մասնաճյուղ: Աշխատակիցների թիվը կազմում է 24, գրքային ֆոնդը՝ 107000 կտոր գրականություն, ընթերցողների թիվը՝ 6000: Գրադարանային համակարգի կրթադաստիարակչական գործունեությունը ճիշտ և նպատակաուղղված կազմակերպելու համար անհրաժեշտ է բարելավել մասնաճյուղերի շենքային պայմանները, բարձրացնել գրքային ֆոնդն ու նյութատեխնիկական բազան:

## 1.14 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ, ՍՊՈՐՏ

Համայնքում գործում է բժշկական կենտրոն, որտեղ զբաղվածների թվաքանակը կազմում է 330 մարդ:

Համայնքում գործում է արտահիվանդանոցային բժշկական կազմակերպություն, որտեղ զբաղվածների թվաքանակը կազմում է 201 մարդ:

Համայնքում գործում է 1 մարզադպրոց, 1 ըմբշամարտի դպրոց և 1 շախմատի դպրոց: Բոլոր 3 մարզադպրոցներն էլ կապիտալ վերանորոգված և համալրված են համապատասխան գույքով և սարքավորումներով:

- Մարզադպրոցի խմբերի թիվը 14 է, սաներինը՝ 155, աշխատակիցների ընդհանուր թիվը՝ 23, որից 8-ը հանդիսանում են սպասարկող անձնակազմի անդամներ:

- Ըմբշամարտի դպրոցի խմբերի թիվը 10 է, սաներինը՝ 110, աշխատակիցների ընդհանուր թիվը՝ 12, որից 5-ը նույնպես հանդիսանում են սպասարկող անձնակազմի անդամներ:

- Շախմատի դպրոցի դասարանների թիվը 10 է, սաներինը՝ 109, աշխատակիցների ընդհանուր թիվը՝ 8, որից 1-ը հանդիսանում է սպասարկող անձնակազմի անդամ:

Սպորտի բնագավառում հիմնական գերակայություններն են՝

Կազմակերպել և կառավարել համայնքային ենթակայության և մարզական հիմնարկների ու կազմակերպությունների գործունեությունը:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում իրականացնել բնակչության առողջության ամրապնդում, ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու մատչելիություն:

Ցուցաբերել ֆինանսական աջակցություն համայնքում գործող մարզադպրոցներում աշխատող մարզիչ մանկավարժների և սաների սոցիալական վիճակի բարելավման, նրանց զանգվածային,

հանրապետական և մարզային միջոցառումների մասնակցության, մարզիկներին անհրաժեշտ մարզագույքով ապահովելու գործում:

Իրականացնել կազմակերպչական աշխատանքներ մարզադպրոցներում և մարզահամալիրներում համայնքային միջոցառումներ անցկացնելու նպատակով:

## 1.15 ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Համայնքի 3 բակային տարածքներում կառուցվել են խաղահրապարակներ և բարեկարգվել, բակային տարածքների բարեկարգումը շարունակելի է:

Համայնքում առկա է զբոսայգի 3,61 հա, որը բարեկարգված է, սակայն կարիք մանկական կառույցների տեղադրման:

## 1.16 ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի զբաղվածության տարածքային կենտրոնում հաշվառված են 815 գործազուրկներ: Համայնքի 901 ընտանիքներ փաստագրված են ընտանեկան նպաստի պետական համակարգում , որոնցից սոցիալապես անապահով են գնահատվել 760 ընտանիքներ: Համայնքում բնակվում են 1716 հաշմանդամներ, միակողմանի ծնողազուրկ 132 և երկողմանի ծնողազուրկ 6 երեխաներ: Համայնքի սոցիալապես խոցելի խմբերի բազմաբնույթ խնդիրները մշտական ուշադրության կենտրոնում են: Համայնքի ղեկավարի միջնորդությամբ պարբերաբար իրականացվում են պետական պատվերի շրջանակներում համայնքի բնակիչների բուժօգնություն: Սոցիալապես անապահով և խոցելի խմբերի ընտանիքների երեխաների համար կազմակերպվում է ամառային ճամբարային հանգիստ:

## 1.17 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Հատկապես վերջին տարիներին աշխուժություն է նկատվում համայնքի ՏԻՄ-երի և բնակչության փոխհարաբերություններում: ՏԻՄ-երի գործունեությունը դարձել է թափանցիկ և հրապարակային, որը զգալիորեն նպաստում է համայնքի բնակչության կազմակերպվածությանը

ՏԻՄ-երի ընդունած որոշումներին և կատարած աշխատանքներին: Համայնքի բնակիչներն սկսել են բավականին ակտիվորեն մասնակցել ՏԻՄ-երի կողմից կազմակերպված հասարակական հանրօգուտ աշխատանքներին, հանրային հանդիպումներին ու միջոցառումներին: Համայնքապետարանում տարեկան մի քանի անգամ կազմակերպվում են հանրային լսումներ և քննարկումներ ( մասնավորապես, համայնքի բյուջեի նախագծի, համայնքային ծրագրերի և այլնի շուրջ), տեղական և միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից անցկացվում են ուսուցման և վերապատրաստման դասընթացներ , սեմինարներ , որոնց հաճույքով մասնակցում են ինչպես համայնքապետարանի աշխատակազմի մասնագետներն ու ավագանին, այնպես էլ համայնքի որոշ ակտիվ բնակիչներ:

## 1.18 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Համայնքում աղետների (բնածին և տեխնածին) ռիսկի կառավարման ոլորտը կարգավորվում է <<Քաղ. պաշտպանության մասին>> ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության մի շարք որոշումների պահանջներին համապատասխան ` 2015թ. Համայնքի ղեկավարի որոշումներով կազմվել են նորացված ՔՊ և բնակչության տարհանման պլանները: Համայնքը գտնվում է ՀԱԷԿ-ի 10 կմ գոտում, այդ իսկ պատճառով պարբերաբար իրականացվում են աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված ուսումնավարժություններ և համագործակցում ենք այդ ոլորտի մարզային համապատասխան մարմինների հետ, ընդգրկելով ՔՊ ծառայությունները և համապատասխան կազմավորումները:

## 1.19 ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Համայնքի գործարար միջավայրը իր մեջ ներառում է հետևյալ ոլորտները առևտրի կետեր 320, հասարակական սննդի այդ թվում ռեստորաններ 21, կենցաղ սպասարկման 35, բնակչության այլ սպասարկման 16, արտադրական 26, որտեղ զբաղված է համայնքի աշխատունակ բնակչության զգալի մասը: Տնտեսավարող սուբյեկտների հետ ՏԻՄ-երը մշտապես

պաշտպանում են լավ ու բարյացակամ հարաբերություններ: Սակայն դրանով հանդերձ համայնքում բիզնեսի զարգացման վիճակը առանձնապես բարվոք համարել չի կարելի, այնքանով, որ համայնքը արտադրական ոլորտում ունի բիզնեսը զարգացնելու մեծ պոտենցիալ: Մասնավորապես գյուղ մթերքների վերամշակման բնագավառում:

Հիմնվելով համայնքում տիրող փաստացի իրավիճակի ուսումնասիրության, վերլուծության և գնահատման արդյունքների վրա՝ կարելի է արձանագրել համայնքում ներկայում առկա ընդհանուր և ոլորտային հիմնական հիմնախնդիրները: Դրանք են՝

1 Համայնքը չունի անձրևաջրերի հեռացման կենտրոնացված համակարգ:

2 Ներհամայնքային ճանապարհները և փողոցները հիմնանորոգման կարիք ունեն, ոչ բոլոր ճանապարհներն են կահավորված ճանապարհային նշաններով:

3 Համայնքի ոչ բոլոր թաղամասերը ունեն ոռոգման ներքին ցանց:

4 Բազմաբնակարան շենքերի սանդղքները ունեն հիմնանորոգման կարիք:

5 Բազմաբնակարան շենքերի բակային տարածքները հիմնականում ունեն բարեկարգման կարիք:

6 Մանկապարտեզների շենքերի մի մասը ունի ուժեղացման, հիմնանորոգման և ջեռուցման համակարգի կառուցման անհրաժեշտություն:

7 Համայնքը չունի աղբի վերամշակման գործարան:

Համայնքի հիմնախնդիրների ցանկը կարելի է շարունակել, սակայն ակնհայտ է, որ 2017-2019թթ. ժամանակահատվածում անհնար է լուծում տալ համայնքում առկա բոլոր հիմնախնդիրներին: Վերևում թվարկված հիմնախնդիրներից անհրաժեշտ է առանձնացնել նրանք, որոնց լուծման, իրատեսականության տեսանկյունից, նպատակահարմար է ներառել համայնքի 2017-19թթ. ՀԶԾ-ում՝ ելնելով համայնքի ռեսուրսային հնարավորություններից և համայնքի հետագա զարգացման՝ ՏԻՄ-երի ընտրած ռազմավարությունից և սահմանած հիմնական նպատակներից:

## ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԹԶՎ – ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Համայնքի աշխարհագրական լավ դիրքը ( մոտիկությունը մայրաքաղաք Երևանին)
- Համայնքի համեմատաբար բարենպաստ կլիման
- Բնակավայրի հարակից գյուղական համայնքները , որտեղ արտադրվում է Արարատյան դաշտավայրի հիմնական բարիքները

- Համայնքում առկա է արտադրական և այլ ենթակառուցվածքներ (արտադրական հզորություններ, կապ, տրանսպորտ, ճանապարհներ և այլն)
- Համայնքը ապահովված է 24 ժամյա խմելու ջրով, բնական գազով և ոռոգման ջրով ։

## ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Ներհամայնքային ճանապարհների ոչ լավ վիճակը
- Համայնքի արտաքին լուսավորության համակարգի ոչ ամբողջական վիճակը
- Անձրևատար կոյուղու բացակայությունը
- Նախադպրոցական հիմնարկների շենքերում ջեռուցման համակարգի մասնակի բացակայությունը
- Համայնքում գոյացած աղբի վերամշակման բացակայությունը
- Համայնքի ոռոգման ներքին համակարգի վիճակը
- Համայնքի ազգաբնակչության զբաղվածության մակարդակը
- Համայնքի գերեզմանատան մասնակի ցանկապատումը

## ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Համայնքի նախադպրոցական շենքերի վերանորոգմամբ և ջեռուցման համակարգի կառուցմամբ հնարավորություն կստեղծի հարմարավետ, ամբողջական ու լիարժեք գործարկելու համայնքի մանկապարտեզները և շուրջ տարին ապահով դարձնել նորմալ կենսագործունեությունը ավելի մեծ թվով երեխաներ ներգրավելով։
- Համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում
- Համայնքի բազմաբնակարան շենքերի բակային տարածքների բարեկարգում
- Ներհամայնքային փողոցների նորոգում
- Արտաքին լուսավորության ցանցի ընդլայնում
- Գերեզմանատան լրիվ ցանկապատում
- Աղբի վերամշակման գործարանի կառուցում

## 2. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Համայնքի տեսլականն է՝

Համայնքը դարձնել գյուղ մթերքների վերամշակման և արդյունաբերական տարածաշրջանային կենտրոն, բարեկարգ ու մաքուր, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող գրավիչ և բարեկարգ բնակավայր

Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար համայնքի ռազմավարությունն է՝

• Համայնքում գյուղ մթերքների հանձնման և վերամշակման արտադրամասերի ստեղծման ու գործարկման խթանում և գործուն աջակցություն

• Աջակցություն առևտրի և սպասարկումների ոլորտի մանր ու միջին ձեռնարկատիրության ընդլայնմանը և զարգացման պայմանների բարելավմանը:

• Համայնքի սեփականություն հանդիսացող ենթակառուցվածքների պահպանում շահագործում, նորոգում և զարգացում:

• Ներհամայնքային ճանապարհների և փողոցների բարեկարգում, ասֆալտապատում, գիշերային լուսավորության համակարգի ընդլայնում, ճանապարհային նշանների տեղադրում:

• Համայնքի բնակչության սոցիալ տնտեսական բարելավում նրանց մատուցվող հանրային ծառայությունների (ջրամատակարարում և ջրահեռացում, գազամատակարարում, էլեկտրամատակարարում, աղբահանություն և սանիտարական մաքրում, տրանսպորտ և կապ, նախադպրոցական և դպրոցական հանրակրթություն, մշակույթ, առողջապահություն և սպորտ, սոցիալական պաշտպանություն և այլն) շրջանակի աստիճանական ընդլայնման և որակի անշեղ բարձրացման միջոցով

• Բազմաբնակարան շենքերի բակային տարածքների և տանիքների բարեկարգում և նորոգում

•Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բարելավման, մասնակցության ձևերի զարգացման միջոցով:

• ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության աստիճանի հետևողական բարձրացում:

Համայնքի զարգացման 2017-19-թթ. ծրագրի հիմնական նպատակներն են՝

• Համայնքի բնակչության զբաղվածության մակարդակի նվազեցում, խթանելով գործնական գյուղմթերքի վերամշակման և արդյունաբերական ձեռնարկությունների վերագործարկման հնարավորությունները

• տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ակտիվացում և բարելավում՝ համայնքի ենթակառուցվածքների ընդլայնման և զարգացման, մասնակցության կարգի մշակման և ընդունման, մասնակցության մեթոդների և ձևերի աստիճանական զարգացման միջոցով

• Առևտրի և սպասարկման ոլորտի մանր ու միջին բիզնեսին աջակցելու միջոցով, զբաղվածության մակարդակի իջեցում

• ներհամայնքային ճանապարհների և փողոցների ասֆալտապատում, լուսավորում

• համայնքի նախադպրոցական կրթության պայմանների (շենքային և գույքային, աշխատակազմի երեխաների թվի) ընդլայնում և բարելավում

• համայնքի բնակչության կենցաղային պայմանների բարելավում՝ տնամերձ հողամասերի ոռոգման ջրի ջրամատակարարման, աղբահանության, սանմաքրման, աղբի վերամշակման, ջրամատակարարման, գազաֆիկացման և այլ ծառայությունների որակի բարձրացման միջոցով

• Բնակչությանը ավելի բարեկարգ պայմաններ ստեղծելը, բազմաբնակարան բնակելի շենքերի բակային տարածքների բարեկարգման և տանիքների հիմնանորոգման ապահովելու միջոցով

## 3. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ԾՐԱԳՐԱՎՈՐՎՈՂ) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Համայնքում պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով, նախատեսվում է սերտ համագործակցություն 22 Արմավիրի մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ: Որպես պետական կառավարման մարմինների հետ համայնքի համագործակցության հիմնական ուղղություններ, 2017-19թթ.նախատեսվում են հետևյալ հանրապետական և մարզային ծրագրերն ու միջոցառումները՝

• Աղբի վերամշակման գործարանի կառուցում, որի շահագործմամբ կլուծվի Արմավիր քաղաքի և քաղաքին հարող այլ համայնքների հավաքման տեղափոխման և մշակման հարցը,

• Աղբի վերամշակման գործարանի կառուցում, որը շահագործման կլուծվի Արմավիր քաղաքի և քաղաքին հարող այլ համայնքների նախնական տեղափոխման և մշակման հարցը, այն ունի բնապահպանական կարևոր նշանակություն և զգալիորեն կկրճատվեն շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունը: Իսկ այրումից առաջացած էներգիան կօգտագործվի ջերմոցային տնտեսության ջեռուցման նպատակով

• Քաղաքի Երևանյան փ. Հիմնանորոգում և զբոսայգում անցնող անձրևատար կոյուղու վերակառուցում, որով կբարելավվի հասարակական տրանսպորտային հաղորդակցության որակը ինչպես նաև կկրճատվի բնածին և տեխնածին աղետների ռիսկը, որը առաջացնում է հեղեղներ և կաթվածահար է լինում Հանրապետական նշված հատվածի երթևեկությունը:

• Բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում, որով կլուծվի շենքերի նախագծային սեյսմակայունությունը և տեխնիկական վիճակը և կլուծվի բնակիչների սոցիալ-կենցաղային խնդիրները:

•Առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում բնակչությանը հանրային ծառայությունների մատուցման մակարդակի բարելավում՝ պետական պատվերի շրջանակներում

•Աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, գործողությունների պլանի կազմում և իրականացում, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում

## 4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

**Աղյուսակ 2. Համայնքի 2014-2016թթ. Բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2017-2019թթ. Բյուջեների մուտքերի կանխատեսումը**

Հազար դրամ

| Հ/հ | Մուտքերի անվանումը | 2014թ. փաստ | 2015թ. նախատ | 2015թ. փաստ. | 2016թ. նախատ. | 2017թ. կանխ. | 2018թ կանխ. | 2019թ կանխ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)* | 831800.6 | 893949.4 | 833923.0 | 841735.5 | 753326.2 | 804734.5 | 804734.5 |
| I. | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)* | 731206,5 | 817929,1 | 765704,5 | 827226,2 | 745326.2 | 794734.5 | 794734.5 |
| 1. | ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ | 185895,4 | 213244,4 | 197247,0 | 224210,5 | 218143.4 | 220000 | 220000 |
| 1.1 | Գույքային հարկեր անշարժ գույքից | 70548,2 | 70822,0 | 65023,8 | 71866,0 | 71807 | 72000 | 72000 |
| | Գույքահարկ շենքերի և շինությունների համար | 49337,2 | 49709,0 | 45796,9 | 50532,0 | 50562 | 51000 | 51000 |
| | Հողի հարկ | 21211,0 | 21113,0 | 19306,9 | 21334,0 | 21245 | 21000 | 21000 |
| 1.2 | Գույքային հարկեր այլ գույքից | 73219,3 | 93710,0 | 90435,2 | 110220,0 | 111799 | 110000 | 110000 |
| | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 73219,3 | 93710,0 | 90435,2 | 110220,0 | 111799 | 110000 | 110000 |
| 1.3 | Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ | 19247,3 | 25712,4 | 16740,3 | 23124,5 | 16537,4 | 18000 | 18000 |
| | Տեղական տուրքեր | 19247,3 | 25712,4 | 16740,3 | 23124,5 | 16537,4 | 18000 | 18000 |
| 1.4 | Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ | 22880,6 | 23000,0 | 25047,7 | 19000,0 | 19000 | 20000 | 20000 |
| | Պետական տուրքեր | 22880,6 | 23000,0 | 25047,7 | 19000,0 | 19000 | 20000 | 20000 |
| 1.5 | Այլ հարկային եկամուտներ | | | | | | | |
| | Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ | | | | | | | |
| | Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ | 459056,3 | 484103,9 | 484103,9 | 484103,9 | 438659.1 | 484534.5 | 484534.5 |
| 1 | Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ | | | | | | | |
| 2 | Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ | | | | | | | |
| 3 | Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ | 454056,3 | 484103,9 | 484103,9 | 484103,9 | 438659.1 | 484534.5 | 484534.5 |
| ) | Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 366944,5 | 417470,4 | 417470,4 | 434124,6 | 434124.6 | 435000 | 435000 |
| ) | Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ | 83809,8 | 62099,0 | 62099,0 | 45444.8 | | 45000 | 45000 |
| ) | Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | 3302,0 | 4534,5 | 4534,5 | 4534,5 | 4534,5 | 4534,5 | 4534,5 |
| ) | ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ | | | | | | | |
| 4 | Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ | 5000,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0 | 0 | 0 |
| ) | Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | 5000,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0 | 0 | 0 |
| ) | ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ | | | | | | | |
| | ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ** | 86254,6 | 120580,6 | 84353,6 | 118911,6 | 87523,7 | 90200 | 90200 |
| .1 | Տոկոսներ | | | | | | | |
| .2 | Շահաբաժիններ | | | | | | | |
| .3 | Գույքի վարձակալությունից եկամուտներ | 30640,6 | 44166,4 | 28029,7 | 43665,( | 27037,0 | 28500 | 28500 |
| | Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | 27634,8 | 39714,9 | 25905,2 | 39398,4 | 25188,0 | 26000 | 26000 |
| | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | | | | | | | |
| | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ | | | | | | | |
| | Այլ գույքի վարձակալությունից մուտքեր | 3005,8 | 4451,5 | 2124,5 | 4266,7 | 1549,0 | 2500 | 2500 |
| .4 | Համայնքի բյուջեին կամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում | 14952,6 | 12624,7 | 15009,4 | 15906,7 | 15406.7 | 15500 | 15500 |
| | Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համապետական բյուջեից ստացվող միջոցներ | 5785,7 | 7282,0 | 6896,2 | 7306,7 | 7306 | 7306 | 7306 |
| .5 | Վարչական գանձումներ | 39781,6 | 61389,7 | 38409,5 | 56220,0 | 44880,0 | 46000 | 46000 |
| | Տեղական վճարներ | 34792,7 | 60589,7 | 37173,7 | 55320,0 | 43060,0 | 45100 | 45100 |
| | Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ | 4988,9 | 800,0 | 1235,8 | 900,0 | 1000 | 900 | 900 |
| | Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 6 | Մուտքերտույժերից, տուգանքներից | 880,0 | 300,0 | 805,0 | 300,0 | 200 | 200 | 200 |
| | Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ | 880,0 | 300,0 | 805,0 | 300,0 | 200 | 200 | 200 |
| | Մուտքեր համայնքի բյուջեին կատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց ցանձվող տույժերից | | | | | | | |
| 7 | Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ | | | | | | | |
| 8 | Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ | | | | | | | |
| 9 | Այլեկամուտներ* | 0,0 | 2100,0 | 2100,0 | 2820,0 | 0 | 0 | 0 |
| | Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր | | | | | | | |
| | Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր | | 22605.7 | 18694.4 | 8699.7 | | | |
| | Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ | 0,0 | 2100,0 | 2100,0 | 2820,0 | | | |
| | ՈՉՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4) | 36255.9 | 18000 | 16707.5 | 8000.0 | 8000 | 10000 | 10000 |
| | Հիմնական միջոցների իրացումից մուտքեր | | | | | | | |
| | Անշարժ գույքի իրացումից մուտքեր | 696.0 | | 299.0 | | | | |
| | Շարժական գույքի իրացումից մուտքեր | | | | | | | |
| | Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր | | | | | | | |
| | Պաշարների իրացումից մուտքեր | | | | | | | |
| | Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր | | | | | | | |
| | Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր | | | | | | | |
| | Հողի իրացումից մուտքեր | 35559.9 | 18000 | 16408.5 | 8000.0 | 8000 | 10000 | 10000 |
| | Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր | | | | | | | |
| Բ. | ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄ ԱՆՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ) | 64338.2 | 58020.3 | 51511.0 | 6509.3 | 0 | 0 | 0 |
| | ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2) | 64338.2 | 58020.3 | 51511.0 | 6509.3 | 0 | 0 | 0 |
| | ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ | | | | | | | |
| 1 | Արժեթղթեր | | | | | | | |
| | -թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր | | | | | | | |
| | -հիմնական գումարի մարում | | | | | | | |
| 2 | Վարկեր | | | | | | | |
| | -վարկերի ստացում | | | | | | | |
| | -ստացված վարկերի հիմնական գումարի մարում | | | | | | | |
| 3 | Փոխատվություններ | | | | | | | |
| | -բյուջետային փոխատվությունների ստացում | | | | | | | |
| | -ստացված փոխատվությունների գումարի մարում | | | | | | | |
| | ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ | 64338.2 | 58020.3 | 58020.3 | 6509.3 | 0 | 0 | 0 |
| 1 | Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն | | | | | | | |
| | -համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրացումից մուտքեր | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | -ֆիզիկական անձանցից կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից ստացված միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր | | | | | | | |
| | -բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում | | | | | | | |
| 2 | Փոխատվություններ | | | | | | | |
| | -նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր | | | | | | | |
| | -փոխատվությունների տրամադրում | | | | | | | |
| 3 | Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը | 122358.5 | 58020.3 | 58020.3 | 6509.3 | 0 | 0 | 0 |
| 4 | Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս | | | | | | | |
| 5 | Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս | | | | | | | |
| 6 | Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում | -58020.3 | 0 | 6509.3 | 0 | 0 | 0 | 0 |
| | որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը | -58020.3 | 0 | 6509.3 | 0 | 0 | 0 | 0 |
| | ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | | | | | | | |
| | ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ | | | | | | | |
| 1 | Արժեթղթեր | | | | | | | |
| | -թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր | | | | | | | |
| | -հիմնական գումարի մարում | | | | | | | |
| 2 | Վարկեր | | | | | | | |
| | -վարկերի ստացում | | | | | | | |
| | -ստացված վարկերի հիմնական գումարի մարում | | | | | | | |
| 3 | Փոխատվություններ | | | | | | | |
| | -փոխատվությունների ստացում | | | | | | | |
| | -ստացված փոխատվությունների գումարի մարում | | | | | | | |

*)Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացվող գումարը չի մտնում բյուջետային ընդհանուր եկամուտների մեջ

## 5. ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ, ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅԹԱՅԹՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Ելնելով համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքներից, համայնքում ներկայում արձանագրված հիմնախնդիրներից, համայնքի զարգացման՝ ՏԻՄ-երի կողմից ընտրված ռազմավարությունից և առաջիկա երեք տարիների համար սահմանված հիմնական նպատակներից, Արմավիր համայնքի ավագանու կողմից քննարկվել և որոշվել է առաջարկվող ծրագրերի ցանկը (աղյուսակ 3)՝ ընդգրկելու համայնքի 2017-2019թթ. ՀԶԾ-ում:

Աղյուսակ 3. 2017-2019թթ. ՀԶԾ-ում ընդգրկելու համար առաջարկվող ծրագրերի ցանկը

| Հ/հ | Ծրագրի անվանումը | Ծրագրի մոտավոր արժեքը (հազ. դրամ) |
|---|---|---|
| 1 | Համայնքի աշխատակազմի պահպանում | 110256.0 |
| 2 | Աշխատակազմի /կառքերի/ գծով ընդհանուր բնույթի ծառայություններ | 7306.7 |
| 3 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 7560.0 |
| 4 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | 11326.0 |
| 5 | Ոռոգում | 24501.8 |
| 6 | Ճանապարհային տրանսպորտ | 23613.0 |
| 7 | Աղբահանում | 99475.1 |
| 8 | Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող) | 6882.0 |
| 9 | Ջրամատակարարում | 1500.0 |
| 10 | Փողոցների լուսավորում | 30124.7 |
| 11 | Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | 19169.5 |
| 12 | Գրադարաններ | 22195.8 |
| 13 | Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ | 19324.5 |
| 14 | Այլ մշակութային կազմակերպություններ | 14354.3 |
| 15 | Նախադպրոցական կրթություն | 246307.6 |
| 16 | Արտադպրոցական դաստիարակություն | 100080.1 |
| 17 | Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) | 9290.0 |
| 18 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | 59.1 |
| 19 | Երևանյան փողոցի անձրևատար կոյուղու վերակառուցում և ասֆալտապատ ծածկույթի հիմնանորոգում | 300.000.0 |
| 20 | Թիվ 1 մանկապարտեզի շենքի հիմնանորոգում և բակային տարածքի բարեկարգում | 175.000.0 |
| 21 | Թիվ 8 մանկապարտեզի շենքի հիմնանորոգում և բակային տարածքի բարեկարգում | 80.000.0 |
| 22 | Ներհամայնքային փողոցների ընթացիկ նորոգում, պահպանում | 75.000. 0 |
| 23 | Հ. Ավետիսյան փողոցի ասֆալտապատ ծածկույթի հիմնանորոգում | 80.000.0 |
| 24 | Ներհամայնքային փողոցների գիշերային լուսավորության համակարգի ընդլայնում վերակառուցում | 17.000.0 |
| 25 | Բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգում | 120.000.0 |

Առաջարկվող ծրագրերի առաջնահերթությունները որոշելու նպատակով, համայնքի ավագանու կողմից սահմանվել են ծրագրերի գնահատման հետևյալ չափանիշները՝

- հանրության աջակցությունը,
- ազդեցությունը գործազրկության մակարդակի իջեցման և արտագաղթի կանխման վրա,
- համայնքի կարողությունների հզորացում,
- բնակչության սոցիալական պայմանների բարելավում:

Կիրառելով ծրագրերի առաջնահերթությունների որոշման մասնակցային կառավարման մեթոդը և օգտագործելով ծրագրերի գնահատման սահմանված չափանիշները՝ համայնքի ավագանին որոշել է վերևում առաջարկված համայնքային ծրագրերի առաջնահերթությունները (աղյուսակ 4)

Աղյուսակ 4. Համայնքային Ծրագրերի առաջնահերթությունների որոշում

| | Ծրագրի անվանումը | Ծրագրի մոտավ. արժեքը (հազ. դրամ) | Գնահատման չափանիշներ (0-10 բալ) | | | | | Ծրագրի առաջնահերթությունը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Հանրության աջակցությունը | Ազդեցությունը գործազրկության մակարդակի իջեցման և աղքատության կանխման վրա | Համայնքի կարողությունների հզորացումը | Բնակչության սոցիալական պայմանների բարելավում | Ընդամենը (բալ) | |
| 1 | Համայնքի աշխատակազմի պահպանում | 110256.0 | X | X | X | X | X | 1 |
| 2 | Աշխատակազմի /կադրերի/ գծով ընդհանուր բնույթի ծառայություններ | 7306.7 | X | X | X | X | X | 2 |
| 3 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 7560.0 | X | X | X | X | X | 3 |
| 4 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | 11326.0 | X | X | X | X | X | 4 |
| 5 | Ոռոգում | 24501.8 | X | X | X | X | X | 5 |
| 6 | Ճանապարհային տրանսպորտ | 23613.0 | X | X | X | X | X | 6 |
| 7 | Աղբահանում | 99475.1 | X | X | X | X | X | 7 |
| 8 | Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող) | 6882.0 | X | X | X | X | X | 8 |
| 9 | Ջրամատակարարում | 1500.0 | X | X | X | X | X | 9 |
| 10 | Փողոցների լուսավորում | 30124.7 | X | X | X | X | X | 10 |
| 11 | Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | 19169.5 | X | X | X | X | X | 11 |
| 12 | Գրադարաններ | 22195.8 | X | X | X | X | X | 12 |
| 13 | Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ | 19324.5 | X | X | X | X | X | 13 |
| 14 | Այլ մշակութային կազմակերպություններ | 14354.3 | X | X | X | X | X | 14 |
| 15 | Նախադպրոցական կրթություն | 246307.6 | X | X | X | X | X | 15 |
| 16 | Արտադպրոցական դաստիարակություն | 100080.1 | X | X | X | X | X | 16 |
| 17 | Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) | 9390.0 | X | X | X | X | X | 17 |
| 18 | 22 համայնքների պահուստային ֆոնդ | 59.1 | X | X | X | X | X | 18 |
| 19 | Երևանյան փողոցի անձրևատար կոլեկտորի վերակառուցում և ասֆալտապատ ծածկույթի հիմնանորոգում | 300,000.0 | 9 | 4 | 8 | 9 | 30 | 19 |
| 20 | Թիվ 1 մանկապարտեզի շենքի հիմնանորոգում և բակային տարածքի բարեկարգում | 175,000.0 | 8 | 4 | 7 | 8 | 27 | 20 |
| 21 | Թիվ 8 մանկապարտեզի շենքի հիմնանորոգում և բակային տարածքի բարեկարգում | 80,000.0 | 8 | 4 | 8 | 8 | 28 | 21 |
| 22 | Ներհամայնքային փողոցների ընթացիկ նորոգում, պահպանում | 75,000.0 | 9 | 3 | 8 | 6 | 26 | 22 |
| 23 | Հ. Ավետիսյան փողոցի ասֆալտապատ ծածկույթի հիմնանորոգում | 80,000.0 | 8 | 3 | 8 | 6 | 25 | 23 |
| 24 | Ներհամայնքային փողոցների գիշերային լուսավորության համակարգի ընդլայնում, վերակառուցում | 17,000.0 | 6 | 4 | 4 | 8 | 22 | 24 |
| 25 | Բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգում | 120,000.0 | 8 | 3 | 6 | 6 | 23 | 25 |

Ստորև ներկայացվում է համայնքի ավագանու վերլուծությունը և եզրակացությունը աղյուսակ 4-ում թվարկված բոլոր ծրագրերի իրականացման հնարավորությունների և ՀԶԾ-ում դրանց ձևակերպման անհրաժեշտության վերաբերյալ՝

• Համայնքի աշխատակազմի, մանկապարտեզի և «Կրթամարզամշակութային համալիրի պահպանման ծրագրերը նախկին տարիներին մշտապես իրականացվել են և գալիք չորս տարիներին ևս իրականացվելու են՝ առանց զգալի փոփոխությունների: Դրանք համարվում են համայնքի ամենաառաջնահերթ երկու ծրագրերը և ձևակերպվելու են համայնքի տարեկան բյուջեներում այդ հիմնարկների պահպանման ծախսերի նախահաշիվներ, այդ պատճառով ՀԶԾ-ում դրանց, որպես առանձին ծրագրերի, ձևակերպման անհրաժեշտությունը չկա:

• Բնակչության սոցիալական ծառայությունների մատուցման ծրագիրն իրականացվում է համայնքի բնակչության սոցիալական ծառայությունների (երեխայի ծննդյան միանվագ օգնություն, սոցիալապես խոցելի ընտանիքներին միանվագ ֆինանսական օգնություն և հարազատին կորցրած ընտանիքին դրամական օգնություն) մատուցման համար: Այս ծրագիրը վերջին տարիներին տարիներին միշտ կրկնվել է, համայնքի առաջնահերթ ծրագրերից մեկն է և ՀԶԾ-ում դրա առանձին ձևակերպման անհրաժեշտությունը չկա:

• Աղբահանության ծառայության մատուցման պահպանություն, ծրագիրը համարվում է առաջնահերթ, յուրաքանչյուր տարի կրկնվող, նույն կերպ իրականացվող և ՀԶԾ-ում դրանց առանձին ձևակերպման անհրաժեշտությունը չկա:

• Համայնքի աշխատակազմի համար տրանսպորտային միջոցների պահպանության ծրագիրը համայնքի կարիքների համար առաջնահերթ ծրագիր է, որի առանձին ձևակերպման անհրաժեշտությունը չկա:

Ստորև ներկայացվում են ՀԶԾ-ում ներառվող ոլորտային Մնացած ծրագրերի առանձին ձևակերպումներն՝ ըստ ոլորտային ծրագրի օրինակելի ձևի:

Ծրագիր 19

Տնտեսական հարաբերություններ. Զբաղեցում, ճանապարհային տնտեսություն
(ոլորտի անվանումը)
Երևանյան փողոցի անձրևատար կոյուղու վերակառուցում և ասֆալտապատ ծածկույթի հիմնանորոգում
(ծրագրի անվանումը)
Արմավիրի համայնքապետարան
(Ծրագրի հայտը ներկայացնող կազմակերպությունը)

Ծրագրի ընդհանուր արժեքը 300 000 հազար դրամ

Ծրագրի հիմնավորումը

Երևանյան փողոցը Արմավիր-Իսահակյան-Գյումրի հանրապետական նշանակության ճանապարհի սկզբնական հատվածն է, որի սպասարկումը իրականացվում է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից: Հիշյալ հատվածի անձրևատար կոյուղին կառուցվել 1970-ական թվականների սկզբին: Քաղաքը չունի անձրևատար կոյուղի, այդ իսկ պատճառով

Երևանյան փողոցը ունենալով ցածրադիր դիրք հանդիսանում է որպես ջրհավաք և ընդունում է իրեն հարող ուղղահայաց փողոցներից հոսող անձրևներից և ոռոգման ավելցուկ ջրերի հոսքը: Տարիներ շարունակ մասնագիտացված սպասարկման աշխատանքներ չիրականացնելու և ճանապարհի երթևեկամասում այլ շին. աշխատանքների ժամանակ առաջացած վնասվածքների պատճառով կոյուղու համակարգը ընդհանրապես չի գործում, որն էլ իր հերթին ուժեղ անձրևների ժամանակ ստեղծում է լրացուցիչ անհարմարություններ , տրանսպորտի նորմալ կենսագործունեության , հարակից առանձին և սպասարկման օբյեկտների և բազմաբնակարան շենքերի բնակիչների համար : Ոչ նորմալ ջրահեռացման պատճառով քանդվում է գոյություն ունեցող ասֆալտի ծածկույթը:

Հաշվի առնելով վերը նշվածը անհրաժեշտ է վերակառուցել անձրևատար կոյուղին և ասֆալտի ծածկույթը հիմնանորոգել:

Ծրագրի նպատակները

Բարելավել համայնքի բնակչության կոմունալ կենցաղային պայմանները, զերծ պահելով ավտոտրանսպորտային միջոցների խցանումներից և վթարներից , նվազեցնել բնական աղետների ռիսկը:

Ծրագրի խնդիրները

1. Դիմել ՀՀ կառավարությանը , համայնքի հետ համատեղ ( մինչև 10%) համաֆինանսավորելու ծրագիրը
2. Պատվիրել և նախապատրաստել ջրահեռացման համակարգի և ասֆալտապատման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

Ծրագրի իրականացումը նախատեսել 2017-2019թթ .

Ծրագրի ակնկալվող արդյունքները

•2019թ. տարեվերջին համայնքում կգործի անձրևատար կոյուղին

• Համայնքում զգալիորեն կբարելավվի տրանսպորտի , կոմունալ-կենցաղային պայմանները, կնվազի աղետների առաջացման ռիսկը:

• Զգալիորեն կբարելավվի միջմարզային և միջհամայնքային հաղորդակցության ուղիների տեխնիկական վիճակը և դրսևկը:

Կապ այլ ծրագրերի հետ

Անձրևատար կոյուղու վերակառուցման ծրագիրն անմիջական կապի մեջ է ներհամայնքային փողոցների վերանորոգման և բարեկարգման ծրագրի հետ: Ջրհեռացման համակարգի վերակառուցումից հետո միայն հնարավոր կլինի կատարել ասֆալտապատման աշխատանքներ: Հիշյալ աշխատանքների իրականացումից հետո միայն հնարավոր կլինի իրականացնել գծանշման և բարեկարգման աշխատանքներ

Ծրագրի բյուջեն

Դիմել ՀՀ կառավարությանը , ՀՀ Տրանսպորտային կապի նախարարությանը ֆինանսական աջակցություն ստանալու համար :

Ծրագիր 20

Կրթություն

(ոլորտի անվանումը)

Թիվ 1 մանկապարտեզի շենքի հիմնանորոգում և բակային տարածքի բարեկարգում

(Ծրագրի անվանումը)

Թիվ 1 մանկապարտեզ ՀՈԱԿ

(Ծրագրի հայտը ներկայացնող կազմակերպությունը)

Ծրագրի ընդհանուր արժեքը 175.000.0 հազար դրամ
Ծրագրի հիմնավորումը
Համայնքի թիվ 1 մանկապարտեզի շենքը կառուցվել է 1970-ական թվականին և հիմնանորոգման չի ենթարկվել: Մանկապարտեզ հաճախում են 90 երեխաներ, գործում է 4 խումբ, աշխատում են 19 աշխատողներ: Մանկապարտեզը չունի ջեռուցման համակարգ, որը թույլ չի տալիս դրպեսզի այն գործի ջուրջ տարին: Բակային տարածքը ունի բարեկարգման և խաղահրապարակի կառուցման կարիք:
Ծրագրի նպատակները
• Ձեռք բերել որևէ դոնոր կազմակերպության համաձայնությունը՝ համայնքի հետ համատեղ համաֆինանսավորելու ծրագիրը ( ծրագրի արժեքի համապատասխանաբար 85% և 15 % համամասնությամբ ):
Պատվիրել և ձեռք բերել թիվ 1 մանկապարտեզի շենքի հիմնանորոգման և բակային տարածքի բարեկարգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:
Ծրագրի իրականացման ժամանակացույցը
Ծրագրի իրականացումը նախատեսել 2017-2019թթ.
Ծրագրի ակնկալվող արդյունքները
Համայնքում զգալիորեն կբարելավվեն նախադպրոցական կրթության և դաստիարակության ծառայության մատուցման շենքային, գույքային և կրթական պայմանները
Ծրագրի բյուջեն
Դիմել 22 կառավարությանը, կամ հիմնադրամներին ու միջազգային կազմակերպություններին՝ ֆինանսական աջակցություն ստանալու հայցով:

Ծրագիր 21

Կրթություն

(ոլորտի անվանումը)

Թիվ 8 մանկապարտեզի շենքի հիմնանորոգում և բակային տարածքի բարեկարգում

(Ծրագրի անվանումը)

Թիվ 8 մանկապարտեզ ՀՈԱԿ

(Ծրագրի հայտը ներկայացնող կազմակերպությունը)

Ծրագրի ընդհանուր արժեքը 60.000.0 հազար դրամ
Ծրագրի հիմնավորումը
Համայնքի թիվ 8 մանկապարտեզի շենքը կառուցվել է 1970-ական թ. և հիմնանորոգման չի ենթարկվել: Մանկապարտեզ հաճախում են 90 երեխաներ, գործում է 4 խումբ, աշխատում են 19 աշխատողներ: Մանկապարտեզը չունի ջեռուցման համակարգ, որը թույլ չի տալիս դրպեսզի այն գործի ջուրջ տարին: Բակային տարածքը ունի բարեկարգման և խաղահրապարակի կառուցման կարիք:

Ծրագրի նպատակները
• Ձեռք բերել դոնոր կազմակերպության համաձայնությունը՝ համայնքի հետ համատեղ համաֆինանսավորելու ծրագիրը ( ծրագրի արժեքի համապատասխանաբար 85% և 15 % համամասնությամբ ):
Պատվիրել և ձեռք բերել թիվ 8 մանկապարտեզի շենքի հիմնանորոգման և բակային տարածքի բարեկարգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը :

Ծրագրի իրականացման ժամանակացույցը
Ծրագրի իրականացումը նախատեսել 2017-2019թթ .
Ծրագրի ակնկալվող արդյունքները
Համայնքում զգալիորեն կբարելավվեն նախադպրոցական կրթության և դաստիարակության ծառայության մատուցման շենքային, գույքային և կրթական պայմանները
Ծրագրի բյուջեն
Դիմել ՀՀ կառավարությանը, կամ հիմնադրամներին ու միջազգային կազմակերպություններին՝ ֆինանսական աջակցություն ստանալու հարցով :

Ծրագիր 22
Տնտեսական հարաբերություններ. ճանապարհային տնտեսություն
(ոլորտի անվանումը)
Ներհամայնքային փողոցների ընթացիկ նորոգում և պահպանում
(ծրագրի անվանումը)
Արմավիրի համայնքապետարան
(Ծրագրի հայտը ներկայացնող կազմակերպությունը)

Ծրագրի ընդհանուր արժեքը 75,000.0 հազար դրամ

Ծրագրի հիմնավորումը
Ներհամայնքային ասֆալտապատ ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 48.8 կմ , որը յուրաքանչյուր տարի նորոգվում է համայնքապետարանի կողմից : Ֆինանսական միջոցների սղության պատճառով փողոցները ենթարկվում են հիմնականում ընթացիկ նորոգման , որի պատճառով էլ բաց է թողնվում նրանց միջին և հիմնանորոգման նորմատիվային ժամկետները և ընթացիկ նորոգումները դառնում են ոչ այնքան էֆեկտիվ:
Համայնքի գույքահարկի բազայում հաշվառված են մարդատար և բեռնատար ավտոմեքենաներ, որոնց մեծ մասը անընդհատ երթևեկում են փողոցներով և փողոցների անբարեկարգ վիճակը բերում է լրացուցիչ ծախսերի: Մեքենաների պահպանման և շահագործման համար, ինչպես նաև անհարմարություններ հետիոտնի համար:

Ծրագրի նպատակները
Ներհամայնքային փողոցները բերել բարեկարգ վիճակի՝ վերացնելով փողոցների փոսերը և դրանք դարձնել անցանելի ու հարմարավետ, հետիոտնի և տրանսպորտային միջոցների երթևեկության համար տարվա բոլոր եղանակներին:

Ծրագրի խնդիրները
•Ներհամայնքային փողոցների նորոգման պահպանման աշխատանքների իրականացումը նախատեսել սկսելով 2017-2019թթ. ընթացքում
• համայնքի 2017-2019թթ. բյուջեներում նախատեսել 25000 հազարական դրամ գումար, նորոգելու և պահպանելու 48.8 կմ երկարությամբ ասֆալտապատ փողոցները
• 2017-2019թթ յուրաքանչյուր տարվա համար ձեռք բերել ճանապարհների նորոգման նախագծա-նախահաշվային աշխատանքների փաստաթղթերը:
•Մինչև 2017-2019թթ. յուրաքանչյուր տարվա հոկտեմբերի 1-ը իրականացնել և ավարտել ներհամայնքային փողոցների նորոգման և պահպանման աշխատանքները:

Ծրագրի իրականացման ժամանակացույցը
Ծրագրի իրականացումը 2017-2019թթ.

Ծրագրի ակնկալվող արդյունքները
• 2017-2019թթ. ընթացքում համայնքում կվերանորոգվեն և կբարեկարգվեն ներհամայնքային 48.8 կմ երկարությամբ հատվածները
• Փողոցներում կվերանան փոսերը, դրանք կդառնան անցանելի ու հարմարավետ, ինչպես տրանսպորտային միջոցների, այնպես էլ հետիոտների համար տարվա բոլոր եղանակներին:
Կապը այլ ծրագրերի հետ
Ներհամայնքային փողոցների վերանորոգման և բարեկարգման ծրագիրն անմիջական կապի մեջ է գտնվում ջրահեռացման և ջրամատակարարման համակարգի վերանորոգման, արտաքին լուսավորության համակարգի անցկացման ծրագրի հետ: Ներհամայնքային փողոցների միայն բարեկարգումից հետո հնարավոր կլինի իրականացնել դրանց գիշերային լուսավորության համակարգի անցկացումը բոլոր փողոցներում:

Ծրագրի բյուջեն
Ծրագիրն իրականացվում է համայնքի բյուջեի միջոցներով:

Ծրագիր 23
Տնտեսական հարաբերություններ. ճանապարհային տնտեսություն
(ոլորտի անվանումը)
2. Ավետիսյան փողոցի ասֆալտապատ ծածկի հիմնանորոգում
(ծրագրի անվանումը)
Արմավիրի համայնքապետարան
(Ծրագիրը ներկայացնող կազմակերպություն)

Ծրագրի ընդհանուր արժեքը 80.000 հազար դրամ

Ծրագրի հիմնավորումը
2. Ավետիսյան փողոցի երկարությունը կազմում է 1.08 կմ: Փողոցը վերջին անգամ հիմնանորոգման է ենթարկվել 1980-ական թվականներին: Ֆինանսական միջոցների սղության պատճառով հիմնանորոգման գրեթե չի ենթարկվել, բաց է թողնվել միջին և հիմնական նորոգման նորմատիվային ժամկետները, այդ իսկ պատճառով էլ այժմ գտնվում է գրեթե անանցանելի վիճակում:Փողոցի անբարենկարգ վիճակը բերում է մեքենաների շահագործման

և պահպանման ծախսերի մեծացմանը, ինչպես նաև անհարմարություններ է ստեղծում հետիոտների համար

Ծրագրի նպատակը

• Հ. Ավետիսյան փողոցը բերել բարեկարգ վիճակի՝ վերացնելով փոսերը և դարձնել անցանելի ու հարմարավետ հետիոտնի և տրանսպորտային միջոցների երթևեկության հետ բոլոր եղանակներին:

• Բեռնաթափել փողոցի բանուկ և առավել ինտենսիվ երթևեկություն ունեցող մյուս փողոցները, ուղղորդելով տրանսպորտային միջոցների հոսքը Հ. Ավետիսյան փողոցով.

Ծրագրի խնդիրները

• Դիմել ՀՀ կառավարությանը, համայնքի հետ համատեղ (մինչև 30%) համաֆինանսավորելու ծրագիրը

• Պատվիրել և նախապատրաստել Հ. Ավետիսյան փողոցի ասֆալտապատ ծածկույթի հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

Ծրագրի իրականացման ժամկետը 2017-2019թթ.

Ծրագրի ակնկալվող արդյունքները

• 2019թ. տարեվերջին համայնքում կբարեկարգվի ևս մեկ կարևոր նշանակություն ունեցող փողոց

• Համայնքում կբարելավվի տրանսպորտային ենթակառուցվածքների վիճակը և բնակչության կոմունալ-կենցաղային պայմանները

• Կբեռնաթափվի քաղաքի կենտրոնական փողոցների երթևեկությունը և կնվազեն ՃՏՊ-ների թիվը

Կապը այլ ծրագրերի հետ

Հ. Ավետիսյան փողոցի ասֆալտապատումը անմիջական կապի մեջ է ջրահեռացման և ջրամատակարարման ցանցի վերակառուցման, ներհամայնքային փողոցների վերանորոգման և ներհամայնքային փողոցների գիշերային լուսավորության ցանցի ընդլայնման և արդիականացման հետ:

Ծրագրի բյուջեն

Դիմել ՀՀ կառավարությանը, ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարությանը կամ հիմնադրամներին համաֆինանսավորմամբ ծրագիրը իրականացնելու հարցով:

Ծրագիր 24

Տնտեսական հարաբերություններ. ճանապարհային տնտեսություն

(ոլորտի անվանումը)

Ներհամայնքային փողոցների գիշերային լուսավորության համակարգի ընդլայնում վերակառուցում

(ծրագրի անվանումը)

Արմավիր քաղաքի <<Լուսավորություն>> ՀՈԱԿ

(Ծրագրի հայտը ներկայացնող կազմակերպությունը)

Ծրագրի ընդհանուր արժեքը 17.000 հազար դրամ

Ծրագրի հիմնավորումը

Ներհամայնքային ոչ բոլոր ճանապարհները և փողոցներն են կահավորված գիշերային լուսավորության համակարգով, որը յուրաշակի վտանգ, անհարմարություններ ու դժվարություններ է առաջացնում հետիոտների և տրանսպորտային միջոցների վարորդների համար: 2004-ից մինչև 2016թ. ընկած ժամանակահատվածում քաղաքի գրեթե բոլոր կենտրոնական փողոցները վերազինվել են գիշերային լուսավորության համակարգով: Փողոցների բարեկարգումից և ասֆալտապատումից հետո անհրաժեշտ է ընդլայնել լուսավորված փողոցների ցանցը:

Անհրաժեշտ է ներդնել ժամանակակից էներգախնայող լուսադիոդային համակարգեր :

Ծրագրի նպատակները

Բարձրացնել ներհամայնքային փողոցներով երթևեկության անվտանգության մակարդակը՝ դարձնելով դրանք լուսավոր, գեղեցիկ ու հարմարավետ համայնքի բնակիչների և տրանսպորտային միջոցների համար:

Բարձրացնել էներգախնայողության և անվտանգության մակարդակը:

Ծրագրի խնդիրները

• Ծրագիրը իրականացնել համայնքի բյուջեի միջոցների հաշվին , հնարավորության դեպքում ձեռք բերել որևէ դոնոր կազմակերպության համաֆինանսավորելու ծրագիրը

• պատվիրել և նախապատրաստել գիշերային լուսավորության համակարգի անցկացման աշխատանքների նախագծա-նախահաշվային աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:

• Համագործակցել <<ՀԷԿ>> ՓԲԸ Արմավիրի մասնաճյուղի հետ, տեխնիկական պայմանների տրամադրման և գոյություն ունեցող հնարավորությունների էֆեկտիվ օգտագործման ուղղությամբ:

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017-2019թթ .

Ծրագրի ակնկալվող արդյունքները

2017-2019թթ. Ընթացքում կընդլայնվի ներհամայնքային գիշերային լուսավորության ցանցը :
• Նոր համակարգի ներդրմամբ կնվազի ցանցի պահպանման և շահագործման համար նախատեսված ծախսերը :

Կապը այլ ծրագրերի հետ
Ներհամայնքային փողոցների գիշերային լուսավորության համակարգի ընդլայնման և վերակառուցման ծրագրի իրականացումն անմիջական կապի մեջ է գտնվում այդ փողոցների ասֆալտապատման և բարեկարգման ծրագրերի իրականացման հետ: Ներհամայնքային փողոցների միայն պատշաճ մակարդակով բարեկարգումից հետո իմաստ կունենա դրանց արտաքին լուսավորության համակարգի անցկացումը, հակառակ դեպքում համայնքի փողոցները չեն ստանա ամբողջական տեսք:

Ծրագրի բյուջեն
Դիմել հիմնադրամներին և դոնոր կազմակերպություններին ՝ ֆինանսական աջակցություն ստանալու հարցով :

Ծրագիր 25

Տնտեսական հարաբերություններ. Քաղաքաշինության և բնակկոմունալ տնտեսության

(ոլորտի անվանումը)

Բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգում

(ծրագրի անվանումը)

Արմավիրի համայնքապետարան

(Ծրագրի հայտը ներկայացնող )

Ծրագրի ընդհանուր արժեքը 120.000 ,0 հազար դրամ

Ծրագրի հիմնավորումը
Համայնքում գոյություն ունի թվով 137 բազմաբնակարան բնակելի շենք, որոնց տանիքները լանջավոր են փայտյա կոնստրուկցիայով և ազբոշիֆերով: Շենքերի տանիքների 90% -ից ավելին վերջին 30 տարիների ընթացքում հիմնանորոգման չեն ենթարկվել : Անբավարար վիճակում գտնվող տանիքների պատճառով բնակիչները կատարում են լրացուցիչ ծախսեր : Բնակարաններին պատճառված վնասները վեր վերցնելու համար, ինչպես նաև շենքը ձեռք է բերում վթարայնության տարբեր աստիճաններ , որը սպառնում է բնակիչների և անցորդների կյանքին և առողջությանը , խաթարվում է բնակիչների կոմունալ կենցաղային պայմանները:

Ծրագրի նպատակները
•Բարելավել բնակիչների սոցիալ-տնտեսական և կոմունալ-կենցաղային պայմանները:

• Նվազեցնել սեյսմիկ ռիսկը, կանխելով շենքի հետագա տեխնիկական վիճակի վատթարացումը:

Ծրագրի խնդիրները
• Ստանալ ՀՀ կառավարության ֆինանսական աջակցություն ծրագիրը իրականացնելու նպատակով, ծրագրի 5% -ը համայնքի կողմից համաֆինանսավորելու նպատակով:
•Ձեռք բերել բազմաբնակարանային բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը այդ թվում շենքերի տեխնիկական վիճակի մասին եզրակացությունները:

Ծրագրի իրականացման ժամանակացույցը
Ծրագրի իրականացումը նախատեսել 2017-2019թթ.
Ծրագրի ակնկալվող արդյունքները
• Կբարելավվի բնակիչների սոցիալ-տնտեսական և կոմունալ-կենցաղային պայմանները
• Կբարձրանա շենքերի սեյսմակայունության աստիճանը՝ կնվազի սեյսմիկ ռիսկերը, կնվազեն շենքերի շահագործման և պահպանության համար իրականացվող ծախսերը:

Ծրագրի բյուջեն
Դիմել ՀՀ կառավարությանը համայնքի հետ համատեղ ծրագիրը համաֆինանսավորելու հարցով :

## ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՍԱՀՄԱՆՈՂ՝ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԿԱՄ ԴՐԱՆՑ ՓՈՓՈԽՄԱՆ (ԼՐԱՑՄԱՆ) ՄԱՍԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Քանի որ համայնքը ունի իր տարածական զարգացումը սահմանող քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր (գլխավոր հատակագիծ, գոտիավորման նախագիծ, ընթացիկ քաղաքաշինական քարտեզ, քաղաքաշինական կադաստր, քաղաքաշինական կանոնադրություն և այլն:Քաղաքի տարածքների կառուցապատումը իրականացվում է համաձայն գլխավոր հատակագծի:

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԱՂԲԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ

2016-2019 թթ. ընթացքում համայնքի սեփականություն համարվող հողերի անտառային և ջրային տարածքների, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի պահպանության ոլորտում նախատեսվում է կազմակերպել և իրականացնել հետևյալ միջոցառումները՝

Լայն բացատրական աշխատանք կատարել բնակչության հետ՝ կենցաղային աղբը չթափելու դրա համար չնախատեսված վայրերում, զերծ մնալու բնության և շրջակա միջավայրի աղտոտումից ու վնասումից:

Տարածաշրջանի այլ համայնքների հետ ծավալել միջհամայնքային համագործակցություն՝ լուծելու ընդհանուր աղբավայրի, աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների կազմակերպման և մատուցման հարցերը:

Սահմանել վերահսկողություն համայնքում գործող քարի վերամշակման արտադրամասերի և այլ արտադրական ձեռնարկության նկատմամբ՝ ուղղված բնության և շրջակա միջավայրի պահպանմանը:

Յուրաքանչյուր տարի գարնանը համայնքում կազմակերպել 2-3 շաբաթօրյակներ՝ իրականացնելու բնության և շրջակա միջավայրի մաքրության, ծառատնկման և ծաղկատնկման աշխատանքներ, ներգրավելով նաև երիտասարդներին և դպրոցականներին:

**Համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ**

Չնայած ՀՀ օրենսդրությամբ ՏԻՄ-երն այս ոլորտում պարտադիր լիազորություններ համարյա չեն ունենս, այնուամենայնիվ, համայնքի ՏԻՄ-երը շահագրգռված են համայնքում գործարար միջավայրի բարելավմամբ և պատրաստակամ են ըստ ամենայնի օժանդակել այս ոլորտում ցանկացած նոր նախաձեռնության, քանի որ այն մեծապես կնպաստի համայնքում նոր աշխատատեղերի ստեղծմանը, բնակչության եկամուտների ավելացմանը և վճարունակության բարձրացմանը, համայնքի բյուջետային սեփական միջոցների հավաքագրման մակարդակի բարձրացմանը և ծավալի մեծացմանը և այս ամենի արդյունքում՝ համայնքի ընդհանուր զարգացմանը:

Համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված՝ 2016-19թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- ըստ ամենայնի աջակցել համայնքում գործող արտադրական ձեռնարկություններին՝ աստիճանաբար ընդլայնելու արտադրության ծավալները և ավելացնելու աշխատատեղերի քանակը,
- համայնքում խթանել գյուղմթերքների արտադրության, հանձնման և վերամշակման նոր արտադրամասերի ստեղծումը, գործարկումը և զարգացումը, աջակցել առևտրի և սպասարկման ոլորտի տնտեսվարողներին ընդլայնելու գործում տեսակները և որակը:
- համայնքում խթանել առևտրի և ծառայությունների փոքր ու միջին նոր կետերի բացումը, բնակչությանը և հյուրերին պատշաճ մակարդակով սպասարկումը՝ պաշտպանելով դրանց սեփականատերերի իրավունքները և շահերը,
- աստիճանաբար բարեկարգել և ասֆալտապատել ներհամայնքային ճանապարհները և փողոցները, անցկացնել գիշերային լուսավորության համակարգեր, տեղադրել ճանապարհային նշաններ՝ նպաստելու համայնքում գործարար միջավայրի բարելավմանը և բիզնեսի զարգացմանը:

## Աղետների ռիսկի կառավարման հիմնական մոտեցումներ

Համայնքում աղետների ռիսկի կառավարմանն ուղղված՝ 2017-19թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- համայնքի բնակչության իմացության, հմտությունների, գիտելիքների մակարդակի ուսումնասիրում և համայնքում առկա ռեսուրսների բացահայտում, որոնք հնարավոր է օգտել աղետների ռիսկի նվազեցմանը նպաստող համայնքային միջոցառումների պլանավորմանն ու իրականացմանը,

• համայնքի խոցելիության և կարողությունների գնահատում, ներառյալ այդ գործընթացի կազմակերպման և իրականացման խմբի ձևավորումը, նախապատրաստական աշխատանքները, տվյալների հավաքագրումը և հետազոտումը՝ համապատասխան գործիքների և մեթոդների ընտրությամբ, վերլուծական աշխատանքների իրականացումը՝ յուրաքանչյուր փուլում ձեռնարկվող քայլերի և ակնկալվող արդյունքների ամրագրմամբ և ձևակերպմամբ,

• համայնքում աղետների ռիսկի կառավարման գործողությունների և միջոցառումների պլանի կազմում և իրականացում,

• համայնքում աղետների ռիսկի կառավարման կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրացում

Համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումներ

Համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված՝ 2017-2019-թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները և միջոցառումները՝

• համայնքի սեփականություն համարվող կոմունալ ենթակառուցվածքների պահպանում, շահագործում, ըստ հնարավորությունների՝ նորոգում և զարգացում,

• համայնքի կոմունալ տնտեսության աշխատանքի կազմակերպում,

• վերահսկողություն համայնքի բնակչության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր կազմակերպությունների կողմից մատուցվող կոմունալ ծառայությունների (ջրամատակարարում և ջրահեռացում, գազամատակարարում, էլեկտրամատակարարում, աղբահանություն և սանիտարական մաքրում, բնակավայրի բարեկարգում և կանաչապատում, գերեզմանատների գործունեության կազմակերպում և դրանց պահպանում և այլն) շրջանակի աստիճանական ընդլայնման և որակի անշեղ բարձրացման նպատակով,

• համայնքի հանգստի վայրերի, խաղահրապարակների, կանաչ տարածքների խնամքի և պահպանության կազմակերպում:

## ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

• տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության հաստատված կարգի համաձայն՝

• համայնքի բնակչության իրազեկվածության բարձրացում՝ ՀՀ տեղական ինքնակառավարման մասին օրենսդրության և համայնքի ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ,

• համայնքի կարիքների և հիմնախնդիրների պարբերական քննարկում, վերհանում, վերլուծում և գնահատում՝ ֆոկուս-խմբի քննարկումների, համայնքային հանդիպումների, ժողովների և բնակիչների հետ անմիջական շփումների և երկխոսությունների միջոցով,

• բնակիչների ներգրավում համայնքի բյուջեի և զարգացման ծրագրերի մասնակցային

պլանավորման, իրականացման, մշտադիտարկման և գնահատման գործընթացներում,

- համայնքի բնակիչների շահերի պաշտպանություն և համախմբում (մոբիլիզացիա) համայնքի որոշակի խնդիրների լուծման, հանրային ծառայությունների մատուցման շուրջ.

## 6. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ 2017-2019 ԹԹ. ԾՐԱԳԻՐԸ

Համայնքի սեփականություն համարվող հողամասի օտարման է ընդգրկել համայնքի սեփականություն համարվող հողամասեր 2017-19 թթ. օտարման ծրագրում: Այդ նպատակով օրենքով սահմանված կարգով կներկայացվեն համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը՝ ուղղակի վաճառքով կամ աճուրդային եղանակով օտարելու համար:

ԱՂՅՈՒՍԱԿ. Համայնքի սեփականություն համարվող հողամասերի 2016-19 թթ. օտարման քառամյա ծրագիր

| Շենքի, շինության հողամասի անվանումը | Հասցեն | Տարածքը /մակերեսը/ (քմ) | Վիճակի գնահատականը | Այլ բնութագրիչներ | 2017 | 2018 | 2019 |
|---|---|---|---|---|---|---|---|
| Թիվ 2 մշակույթի տուն | Կոմիտաս 29 | 1759.1 | վատ | | + | + | |
| Կենտրոնական կաթսայատուն | | | | | + | + | |
| Ոչ բնակելի տարածք | Հանրապետության 18 նկուղ | 110.3 | | | + | + | |
| Արոտ հողատեսք | | 100 հա | | | 50 հա | 50 հա | |
| Բնակելի, արտադրական և հասարակական | | 2 հա | | | 1 հա | 1 հա | |

## ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Համաձայն տեղական ինքնակառավարման բնագավառի 22 օրենսդրության, ՀԶԾ – ն հանդիսանում է համայնքի բյուջեների ձևավորման ծրագրային հիմքը: ՀԶԾ-ում 2017-2019թթ. համար նախատեսված ոլորտային ծրագրերը, համայնքային ծառայությունները և միջոցառումները հիմք կհանդիսանան համայնքի այդ տարիների բյուջեների կազմման, ընդունման և իրականացման համար: Գործնականում, ՀԶԾ-ի իրականացումը կհանգի հիմնականում (չհաշված ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին նախատեսված ծրագրերը, ծառայությունները և միջոցառումները) համայնքի գալիք երեք տարիների բյուջեների մշակմանը և կատարմանը: Հետևաբար համայնքի 2017-19թթ. ՀԶԾ-ն ամբողջական ծավալով իրականացնելու հարցը մեծապես կախված կլինի համայնքի առաջիկա չորս

տարիների բյուջեներում նախատեսվող միջոցների (հատկապես սեփական) փաստացի կատարման մակարդակից, ինչպես նաև դրանց խնայողաբար ու արդյունավետ ծախսումից:

ՀԶԾ-ի իրականացումը շատ բանով պայմանավորված կլինի նաև այն բանից, թե համայնքի ՏԻՄ-երին ինչպես կհաջողվի նպատակային և արդյունավետ համագործակցություն ծավալել ՀՀ պետական կառավարման համապատասխան մարմինների (հատկապես՝ ՀՀ Արմավիրի մարզի մարզպետարանի), ՀՀ-ում (մասնավորապես՝ ՀՀ Արմավիր մարզում) գործող միջազգային և տեղական դոնոր, մասնավոր և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, անհատ գործարարների հետ՝ համայնքային տնտեսությունում ապահովելու ՀԶԾ-ով պլանավորված ներդրումները և միջոցները:

ՀԶԾ-ում կամ տվյալ տարվա բյուջեում ներառված ծրագրերը կամ ծառայությունները պատշաճ մակարդակով իրականացնելու համար, նախատեսվում է, որ յուրաքանչյուր ծրագրի կամ ծառայության համար կսահմանվեն և կհաստատվեն դրանով նախատեսված աշխատանքների կատարման որոշակի ցուցանիշներ, որոնց միջոցով էլ մոնիթորինգի կենթարկվի և կգնահատվի տարեկան առաջընթացը ՀԶԾ-ով սահմանված՝ համայնքի միջնաժամկետ նպատակներին հասնելու գործում:

ՀԶԾ-ի կառավարման հանձնաժողովը տարին երկու անգամ կիրականացնի ՀԶԾ-ի տվյալ տարվա համայնքային ծրագրերի և ծառայությունների ներքին մշտադիտարկում (մոնիթորինգ), որի արդյունքները կներկայացվեն համայնքի ղեկավարին, վերջինիս կողմից էլ՝ համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

ՀԶԾ-ի իրականացման հսկողությունը և ներքին վերահսկողությունը կիրականացնեն համապատասխանաբար համայնքի ղեկավարը և համայնքի ավագանին: ՀԶԾ-ի ներքին վերահսկողության արդյունքները կներկայացվեն համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

ՀԶԾ-ի իրականացման յուրաքանչյուր տարվա և 2017-2019թթ ծրագրի ժամկետի ավարտին ՀԶԾ կառավարման հանձնաժողովի կողմից կկատարվի դրա տարեկան կամ ամբողջ ծրագրի գնահատում՝ ՀԶԾ-ում ներառված ծրագրերի, ծառայությունների և աշխատանքների կատարման ցուցանիշների սահմանման և գնահատման միջոցով:

ՀԶԾ-ի տարեկան կամ ամբողջ ծրագրի գնահատման արդյունքների հիման վրա ՀԶԾ կառավարման հանձնաժողովը կկազմի ՀԶԾ-ի իրականացման տարեկան կամ ամբողջ հաշվետվությունը և կներկայացնի համայնքի ղեկավարին: Այդ հաշվետվության նպատակը կլինի՝ վեր հանել համայնքի առանցքային սոցիալ-տնտեսական զարգացումները մեկ կամ ամբողջ ծրագրի ընթացքում, բացահայտել բացթողումները, թերությունները և շեղումները հաստատված ՀԶԾ-ից:

Համայնքի ղեկավարը , մինչև ՀԶԾ –ի իրականացման տարեկան կամ ամբողջ ծրագրի հաշվետվությունը համայնքի ավագանուն ներկայացնելը , կկազմակերպի և կանցկացնի դրա աշխատանքային և հանրային բաց քննարկումներ 15-օրյա ժամկետում` այդ մասին իրազեկելով համայնքի բնակչությանը , համայնքում գործող պետական , քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածների կազմակերպություններին , շահագրգիռ այլ անձանց:

Համայնքի ղեկավարը ՀԶԾ –ի իրականացման տարեկան կամ ամբողջ ծրագրի հաշվետվությունը, դրա հանրային քննարկումների ժամանակ համայնքի հանրությունից ստացված և բերված դիտողությունների ու առաջարկությունների վերաբերյալ տեղեկանքը և կից փաստաթղթերը, օրենքով սահմանված կարգով, կներկայացնի համայնքի ավագանու քննարկմանը:

Համայնքի ավագանին ՀԶԾ–ի իրականացման տարեկան կամ 2017-19թթ. հաշվետվությունը կքննարկի օրենքով և ավագանու կանոնակարգով սահմանված կարգով և կկայացնի համապատասխան որոշում :

Հիմնվելով ՀԶԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության վերաբերյալ համայնքի ավագանու կայացրած որոշման վրա, ՀԶԾ-ի վերանայման անհրաժեշտության դեպքում, համայնքի ղեկավարը ՀԶԾ-ում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ իր և Ալավ համայնքի ավագանու անդամներից ստացված բոլոր առաջարկությունները , օրենքով սահմանված կարգով, ներկայացնի համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը: